

ԱՆՎԵՐՆԱԳԻՐ

Մշուշները դառնում են ամպ,
Ու հեռուններն են մթնում,
Իրիկնային արդարութեամբ
Արեւը ծովն է մտնում:

Քամին՝ սուսափ, ալիքն հառաչ,
Հաւքը ճիչեր է հանում,
Համբաները մընում կանաչ,
Համբարդներն են ծերանում:

Մայրամուտն էլ կ'անցնի անհետ,
Կը գայ գիշերը խաւար,
Արի երբանք Արեւի հետ
Մենք էլ իջնենք ծովն ի վար:

* * *

Մի քիչ ուրիշ են մեր սարերը,
Համբաները փարոս են,
Ուրիշ է սարերի մեր սէրը,
Մեր սրտերը սարերին կարօտ են:

Մեր աչքերը միշտ էլ բաց են,
Մեր Արեւը մայր չի մտնում,
Մեզ համար մի տեղ լուսաբաց է,
Մի տեղ՝ նոր է մթնում:

Մեզնից մէկը միշտ ճամբորդ է:
Արեւը մեր՝ մայր չի մտնում,

Մեր հայեացքը սարերինն է,
Սարերով ենք իրար գտնում:

* * *

Լճն իմանամ, ծաղիկների
Բուրմունքն ո՞ւր է տանում փամին,
Ուրիշ դաշտի մեղուններին
Ուրախ լուր է տանում փամին:

Երազի պէս հաշտ ու քեքեւ,
Եւ անանուն, եւ անմարմին,
Ծաղիկներից առնում է քեւ
Ու քոչում է քեքեւ փամին:

Ու ցրում է հոգսեր հազար,
Փարւում է նա փար ու սարին,
Եւ ամէնփին էլ հաւասար,
Նոյն սիրով է սիրում փամին:

* * *

Էս աշխարհից
Զանգի ղօղանջ կը տանեմ,
Թռչունների ծլվլուցներ,
Գետերի կանչ կը տանեմ,
Որ ջրերս վազեն, վազեն,
Թռչուններս ծլվլլան,
Զանգը զնգայ, զանգերն հնչեն,
Կարօտս լան, յաւերժ լան:

* * *

Երագիս մէջ հսկայ ծառը ընկաւ վար,
 — այս երազը տխրութիւն է ներշնչում —
 Շուրջս գիշեր եւ անքափանց մի խաւար,
 Ինչ-որ տեղից կարծես եղբայրս էր կանչում:

— Ո՞ւր ես, ախպեր, ի՞նչ ես անում, ո՞ւր կորար,
 Քեզ կը սիրեմ, կը փայփայեմ, արի տուն,
 Լուսաբացին քեզ կը դընեմ ճանապարհ,
 Իսկ հիմա քեզ բարի գիշեր, բարի փուն:

Գիշերն ամբողջ եղբայրս ինձ էր կանչում,
 Գիշերն ամբողջ ասում էի թէ կը գամ,
 Այս երազը տխրութիւն է ներշնչում,
 Այս երազը կարծես լինի իրական:

Երեւան

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՅՈՎՆԱԹԱՆ